

2. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

2.1. Պետական բյուջեի ցուցանիշներ

Ըստ ՀՀ ֆինանսների նախարարության նախնական տվյալների, 2000թ. հունվար ամսվա ՀՀ պետական բյուջեի եկամուտները և պաշտոնական տրանսֆերտները կազմել են 7747,5¹ մլն. դրամ և նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ նվազել՝ 33,6%-ով:

2000թ. հունվարին պետական բյուջեն անբողջապես համալրվել է ներքին աղբյուրներից ստացված եկամուտների հաշվին:

Բյուջեի եկամուտների և պաշտոնական տրանսֆերտների 79,2%-ը կազմել են հարկային եկամուտները՝ 6130,9 մլն. դրամ, ընդ որում հարկային եկամուտների 60,4 %-ը մուտքագրվել է անուղղակի հարկերի գծով (նախորդ տարվա նույն ժամանակաշրջանում նշված ցուցանիշը կազմել է 64,6%): Միաժամանակ, ավելացված արժեքի հարկի գծով մուտքերը կազմել են հարկային եկամուտների 41,0%-ը, իսկ ակցիզային հարկինը՝ 19,4%-ը: Ակցիզային հարկի գծով եկամուտների 44,4%-ը բաժին է ընկել ՀՀ ներմուծվող ենթակառուցվածքային ապրանքներին:

Ավելացված արժեքի հարկի գծով մուտքերը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ նվազել են 15,5 %-ով, իսկ ակցիզային հարկի գծով մուտքերն աճել են 10,1 %-ով:

2000 թ. հունվարին հարկային եկամուտների 21,6%-ն ապահովվել է շահութահարկի և եկամտահարկի գծով մուտքերի հաշվին: Նախորդ տարվա հունվար ամսվա համեմատ շահութահարկից մուտքերն աճել են 10,0%-ով, իսկ եկամտահարկից մուտքերը նվազել՝ 26,7%-ով:

1999թ. հունվար ամսվա նկատմամբ 2000 թ. նույն ժամանակաշրջանում գույքահարկի գծով մուտքերը նվազել են 10,2 %-ով, իսկ հողի հարկի գծով մուտքերն աճել՝ 6,2%-ով և կազմել են համապատասխանաբար՝ 11,4 և 8,6 մլն դրամ:

Պետական բյուջեի ընդամենը եկամուտների և պաշտոնական տրանսֆերտների 4,7 %-ն ապահովվել է պետական տուրքի հաշվին (365,2 մլն. դրամ)՝ կազմելով նախորդ տարվա հունվարի պետական տուրքից մուտքերի (453,9 մլն. դրամ) 80,5 %-ը:

Պետական բյուջեի ոչ հարկային եկամուտները կազմել են 1248,8 մլն. դրամ կամ ընդամենը եկամուտների և պաշտոնական տրանսֆերտների 16,1 %-ը, որոնց կառուցվածքում ՀՀ կենտրոնական բանկի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից մուտքերը կազմել են 80,1 %:

Կապիտալի գործառնություններից եկամուտները կազմել են 2,6 մլն. դրամ, որից պետական սեփականություն համարվող հիմնական միջոցների օտարումից մուտքերը՝ 2,2 մլն. դրամ կամ 84,6 %-ը:

Պետական բյուջեի եկամուտների կառուցվածքը

¹ հունվար ամսվա պետական բյուջեի եկամուտների մեջ ներառված չեն ՀՀ Պետական եկամուտների նախարարության նյութական խրախուսման և սոցիալական զարգացման ֆոնդի գումարները

2. ՀԱՐԿԱՐՅՈՒԶԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ
(տոկոսներով ընդամենի նկատմամբ)

	1999 թ. հունվար	2000 ¹ թ. հունվար
Եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ, ընդամենը <i>այդ թվում՝</i>	100	100
Ընդամենը եկամուտներ <i>որից՝</i>	99,8	100
Ա. Ընթացիկ եկամուտներ	99,8	100
1. հարկային եկամուտներ <i>այդ թվում՝</i>	53,9	79,2
ավելացված արժեքի հարկ	25,6	32,5
շահութահարկ	5,0	8,4
եկամտահարկ	7,9	8,7
ակցիզային հարկ	9,3	15,4
գույքահարկ	0,1	0,1
հողի հարկ	0,1	0,1
մաքսատուրք	3,2	4,7
հաստատագրված վճարներ	2,5	3,3
բնական պաշարների օգտագործման և շրջակա միջավայրի պահպանման համար վճարներ	0,2	6,0
2. պետական տուրք	3,9	4,7
3. ոչ հարկային եկամուտներ	42,0	16,1
Բ. Կապիտալի գործառնություններից եկամուտներ	-	-
Գ. Պաշտոնական տրանսֆերտներ	0,2	-

ՀՀ պետական բյուջեի ծախսերը 2000թ. հունվարին կազմել են 2905,6² մլն. դրամ, որից ընթացիկ ծախսերը՝ 2508,5 մլն. դրամ կամ ընդամենը ծախսերի 86,3%-ը: Ընթացիկ ծախսերում 1451,0 մլն. դրամը կամ 57,8%-ը կազմել են տրանսֆերտները (ընդամենը ծախսերի 49,9%-ը), իսկ ապրանքների և ծառայությունների ձեռք բերման հետ կապված ծախսերը ընթացիկ ծախսերում կազմել են 177,5 մլն դրամ կամ 7,1%-ը:

Պետական պարտքի սպասարկման ծախսերը կազմել են 880,1 մլն. դրամ կամ ընթացիկ ծախսերի 35,1%-ը (ընդամենը ծախսերի 30,3 %-ը): Ներքին պարտքի սպասարկման ծախսերը կազմել են 588,8 մլն. դրամ, արտաքին պարտքինը՝ 291,3 մլն. դրամ:

Պետական բյուջեի ծախսերի վերաբերյալ տվյալները, ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման խմբերի

	2000թ. հունվար, մլն. դրամ	2000թ. հունվար, %-ով ընդամենի նկատմամբ
Ընդամենը ծախսեր <i>այդ թվում՝</i>	2905.6	100
01 Ընդհանուր բնույթի պետական ծառայություններ	826.1	28.4
02 Պաշտպանություն	750.8	25.8
03 Հասարակական կարգի պահպանություն և անվտանգություն	102.0	3.5
04 Կրթություն և գիտություն	150.0	5.2
05 Առողջապահություն	-	-
06 Սոցիալական ապահովագրություն և սոցիալական ապահովություն	0.6	-
07 Մշակույթ. սպորտ և կրոն	33.2	1.2
08 Բնակարանային-կոմունալ տնտեսություն	-	-
09 Վառելիքային էներգետիկ համալիր	-	-

¹ աղյուսակում գետեղված են 17.02.2000թ. դրությամբ տրամադրված տվյալները

² հունվար ամսվա պետական բյուջեի ծախսերի մեջ ներառված չեն միջազգային ֆինանսական կազմակերպություններից և օտարերկրյա պետություններից ստացվող միջոցներով իրականացվող նպատակային ծրագրերի, ինչպես նաև ՀՀ Պետական եկամուտների նախարարության նյութական խրախուսման և սոցիալական զարգացման ֆոնդի գումարները

2. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

		2000թ. հունվար, մլն. դրամ	2000թ. հունվար, %-ով ընդամենի նկատմամբ
10	Գյուղատնտեսություն, անտառային և ջրային տնտեսություն և ձկնաբուծություն	-	-
11	Լեռնահանքային արդյունաբերություն և հանքային հանածոներ	0.7	-
12	Տրանսպորտ և կապ, ճանապարհային տնտեսություն	150.0	5.2
13	Այլ տնտեսական ծառայություններ	- 2.9	- 0.1
14	Հիմնական խմբին չդասվող ծախսեր	895.1	30.8

2000թ. հունվարին պետական բյուջեի հավելուրդը կազմել է 4841,9 մլն. դրամ:

Պետական բյուջեի կատարման վերաբերյալ տվյալները

	1999թ. հունվար	2000 ¹ թ. հունվար
Եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ, ընդամենը		
մլն. դրամ	11661,3	7747,5
%-ով ՀՆԱ-ի նկատմամբ	32,9	22,0
այդ թվում՝		
հարկային եկամուտներ		
մլն.դրամ	6282,1	6130,9
%-ով ՀՆԱ-ի նկատմամբ	17,7	17,4
պետական տուրք		
մլն.դրամ	453,9	365,2
%-ով ՀՆԱ-ի նկատմամբ	1,3	1,0
ոչ հարկային եկամուտներ		
մլն. դրամ	4902,2	1248,8
%-ով ՀՆԱ-ի նկատմամբ	13,8	3,6
կապիտալի գործառնություններից եկամուտներ		
մլն. դրամ	-	2,6
%-ով ՀՆԱ-ի նկատմամբ	-	-
պաշտոնական տրանսֆերտներ		
մլն. դրամ	23,1	-
%-ով ՀՆԱ-ի նկատմամբ	0,1	-
Ծախսեր, ընդամենը		
մլն. դրամ	7561,6	2905,6
%-ով ՀՆԱ-ի նկատմամբ	21,3	8,3
Պակասուրդ (-), հավելուրդ		
մլն. դրամ	4099,7	4841,9
%-ով ՀՆԱ-ի նկատմամբ	11,6	13,7

Ըստ ՀՀ պետական եկամուտների նախարարության տվյալների, 2000թ. փետրվարի 1-ի դրությամբ ընդամենը չմարված հարկային պարտավորությունները (ապառք, տույժ և տուգանք), ներառյալ նախորդ տարվանից մնացորդը, կազմել են 117313,8 մլն. դրամ, որից միայն ապառքների գումարը՝ 47362,0 մլն.դրամ կամ ընդամենը պարտավորությունների 40,4 %-ը: 2000թ. հունվարի 1-ի համեմատ ապառքների տեսակարար կշիռը ընդամենը պարտավորություններում նվազել է 0,5 տոկոսային կետով, իսկ 1999թ. փետրվարի 1-ի համեմատ աճել՝ 0,4 տոկոսային կետով: 2000թ. փետրվարի 1-ի դրությամբ ընդամենը ապառքներում ամենամեծ տեսակարար կշիռը բաժին է ընկել ավելացված արժեքի հարկին՝ 38,6 % և շահութահարկին՝ 24,7 %:

Հարկային եկամուտների գծով ապառքների կառուցվածքը

	1999թ. 1.02	2000թ. 1.01	2000թ. 1.02
Ընդամենը հարկային ապառքներ	35710.8	48213.3	47362.0

1 աղյուսակում գետեղված են 17.02.2000թ. դրությամբ տրամադրված տվյալները

2. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

	1999թ. 1.02	2000թ. 1.01	2000թ. 1.02
<i>%-ով ընդամենի նկատմամբ</i>	100	100	100
այդ թվում՝			
ավելացված արժեքի հարկ	17165.9	19552.8	18275.3
<i>%-ով ընդամենի նկատմամբ</i>	48.1	40.5	38.6
շահութահարկ	6326.2	11744.5	11721.1
<i>%-ով ընդամենի նկատմամբ</i>	17.7	24.4	24.7
ակցիզային հարկ	1338.2	1437.8	1301.4
<i>%-ով ընդամենի նկատմամբ</i>	3.7	3.0	2.8
հողի հարկ	5379.8	6394.9	6511.4
<i>%-ով ընդամենի նկատմամբ</i>	15.1	13.3	13.7
այլ հարկային ապառքներ	5500.7	9083.3	9552.8
<i>%-ով ընդամենի նկատմամբ</i>	15.4	18.8	20.2

Միաժամանակ, 2000թ. փետրվարի 1-ի դրությամբ ընդամենը հարկային եկամուտների գծով գերավճարները, ներառյալ նախորդ տարվանից մնացորդը, կազմել են 18158,4 մլն. դրամ և 2000թ. հունվարի 1-ի համեմատ աճել՝ 6,2 %-ով, իսկ 1999թ. փետրվարի 1-ի համեմատ՝ 73,8 %-ով: 2000թ. փետրվարի 1-ի դրությամբ ընդամենը գերավճարներում ամենամեծ տեսակարար կշիռը բաժին է ընկել ավելացված արժեքի հարկին՝ 75,1 % և շահութահարկին՝ 15,3 %: